

Հավելված
Հայաստանի Հանրապետության
դատական դպրոցի
կառավարման խորհրդի
2013թ. հունվարի 18-ի թիվ 02/13 որոշման

Կ Ա Ր Գ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՍԲ ԲԱԺԻՆԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՐՏԱՆԵՐԹ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՄԱԿԻ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

I. Դատավորների թեկնածությունների ցուցակի վարչական մասնագիտացմամբ բաժինը համալրելու նպատակով հայտերի ընդունումը և անցկացվող արտահերթ որակավորման ստուգման գրավոր քննությունների տեսակը

1. Դատավորների թեկնածությունների ցուցակի վարչական մասնագիտացմամբ բաժինը համալրելու նպատակով անցկացվող արտահերթ որակավորման ստուգման գրավոր քննության /այսուհետ՝ Քննություն/ տեսակն է.

երկու խնդիր՝ վարչական իրավունքի և վարչական դատավարության վերաբերյալ:

Որակավորման ստուգումների գրավոր աշխատանքների Ստուգման և գնահատման հանձնաժողովը խնդիրները հաստատում է քննության օրը:

2. Յուրաքանչյուր քննական խնդրի տվյալների հիման վրա հավակնորդից պահանջվում է կազմել համապատասխան դատական ակտ, որը պետք է համապատասխանի դատական ակտին օրենսդրությամբ ներկայացվող բոլոր պահանջներին:

II. Քննության անցկացման կարգը

3. Որակավորման ստուգմանը մասնակցելու պահանջները բավարարող հայտ ներկայացրած հավակնորդներին Հայաստանի Հանրապետության դատական դպրոցը /այսուհետ՝ Դպրոց/ տրամադրում է վկայական /այսուհետ՝ Վկայական/: Վկայականը ներառում է «ՀՀ դատական դպրոց» անվանումը, հավակնորդի անուն-ազգանունը, լուսանկարը, որակավորման ստուգման անցկացման վայրի, օրվա և ժամի մասին նշումը, ինչպես նաև վկայականի համարը: Վկայականը ստորագրում է Դպրոցի տնօրենը, այն կնքվում է Դպրոցի կնիքով:

4. Յուրաքանչյուր հավակնորդ ներկայանում է Քննության անցկացման վայր անձնագրով և Վկայականով:

Անձնագիր և Վկայական չներկայացրած, ինչպես նաև նշանակված ժամից ուշացած հավակնորդի մուտքը քննասենյակ արգելվում է: Նշանակված ժամից ուշանալու և չներկայանալու պատճառը չի քննարկվում:

5. Հավակնորդներին թույլատրվում է քննությանը ներկայանալ հետևյալ նորմատիվ ակտերով.

- ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք.
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք.
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք.
- ՀՀ մաքսային օրենսգիրք.
- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք.
- «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք.
- «Հայաստանի Հանրապետության հարկային օրենքները» /Պաշտոնական տեղեկագիր 2012/:

6. Հավակնորդին արգելվում է իր հետ քննասենյակ տանել համակարգիչներ, այլ էլեկտրոնային սարքավորումներ:

7. Քննության տևողությունը 6 ժամ է:

8. Քննասենյակում յուրաքանչյուր հավակնորդ զբաղեցնում է առանձին գրասեղան: Քննության ընթացքում հավակնորդների շփումը միմյանց հետ արգելվում է: Քննասենյակից հավակնորդը կարող է դուրս գալ միայն Դպրոցի ներկայացուցչի թույլտվությամբ: Հավակնորդը չի կարող քննության ընթացքում որևէ նյութ քննասենյակից հանել կամ քննասենյակ մտնել:

9. Մինչև Քննության սկիզբը յուրաքանչյուր հավակնորդ ստանում է իր անվամբ և Վկայականի համարով ծրար, որը պարունակում է`

ա/ քննական խնդիրները

բ/ Դպրոցի կնիքով դրոշմված թղթեր

գ/ գրիչ:

10. Քննասենյակում քննությունների ընթացքը կազմակերպում են Դպրոցի տնօրենը և նրա կողմից լիազորված Դպրոցի ներկայացուցիչները, որոնք կրում են տարբերանշան: Չլիազորված անձանց մուտքը քննասենյակ արգելվում է: Քննությունը սկսվելուց հետո քննասենյակ կարող են մտնել միայն Դպրոցի կառավարման խորհրդի նախագահը և անդամները:

11. Քննական աշխատանքները պետք է գրվեն հատկացված գրիչներով, դրոշմված թղթերի վրա: Արգելվում է կատարել որևէ նշում, որը կարող է անհատականացնել գրավոր աշխատանքը:

12. Քննական աշխատանքն ավարտելուց հետո հավակնորդը Դպրոցի ներկայացուցչին հանձնում է աշխատանքը և ծրարը: Դպրոցի ներկայացուցիչը, ծրարի վրա նշելով գրված թերթերի քանակը, փակում է ծրարը, ինչից հետո ծրարի վրա ստորագրում են Դպրոցի ներկայացուցիչը և հավակնորդը և ծրարը հանձնվում է Դպրոցի տնօրենին: Քննության ավարտից հետո Դպրոցի տնօրենը գրավոր աշխատանքների ծրարները հանձնում է Դպրոցի կառավարման խորհրդի նախագահին` ծածկագրման աշխատանքները կազմակերպելու և Ստուգման և գնահատման հանձնաժողովին փոխանցելու համար:

13. Հավակնորդի կողմից սույն կարգի խախտում թույլ տալու դեպքում Դպրոցի ներկայացուցիչը կազմում է արձանագրություն և ներկայացնում Դպրոցի տնօրենին, որը, գտնելով, որ կատարված խախտումը հիմք է քննասենյակից հեռացնելու համար, խորհրդակցելով Դպրոցի կառավարման խորհրդի անդամի հետ, հավակնորդին հեռացնում է քննասենյակից: